ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 24
ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ (ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ) ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Մեղրի

03.11.2026 թ.

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի «Մեղրիի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի Լեհվազի և Վարդանիձորի մասնաճյուղերում **երաժշտության դաստիարակի (երաժշտական ղեկավարի)** (1) թափուր հաստիքը համալրելու նպատակով մրցույթ հայտարարելու մասին

Համաձայն ԿԳՄՍ նախարարի 17 փետրվարի 2022թ. N 08-Ն հրամանի՝ «Մեղրիի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ «Մեղրիի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի Լեհվազի և Վարդանիձորի մասնաճյուղերում երաժշտության դաստիարակի (երաժշտական ղեկավարի) պաշտոնի համար՝ 1 դրույքով:

Լրիվ դրույքաչափը՝ համաձայն Մեղրու ավագանու 24.12.2024թ. թիվ 123-Ա որոշման սահմանվել է 138 500 (առանց հարկումի) ՀՀ դրամ:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Սյունիքի մարզ, ք.Մեղրի, Ադելյան 5 հասցեում: Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվում 01.12.2026թ.:

Մրցույթի օր է սահմանվում՝ 04.12.2026թ.:

1.Անհարաժեշտ է ներկայացնել ստորև ներկայացված փաստաթղթերը

1) դիմում (Ձև 1).
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).
3) անձը հաստատող փաստաթուղթ.
4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).
5) ինքնակենսագրություն (Ձև 4).
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.
7)այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
8)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.
9)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Որակավորման պահանջները՝ հաստատության երաժշտության դաստիարակի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա՝

1) միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և երաժշտական կրթություն (երաժշտական կամ արվեստի դպրոց).
2) դպրոցահեն նախակրթարաններում նաև՝ «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին բավարարող անձը, որը տվյալ դպրոցում դասավանդում է «Երաժշտություն» առարկան:

Մրցույթին կարող են մասնակցել նաև ԿԳՄՍ նախարարի 2025 թ. հուլիսի 22-ի «Նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատության կողմից իրականացվող մոդուլի երաշխավորման կարգը հաստատելու մասին» N 57-Ն հրամանով երաշխավորված նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 20 կրեդիտ հավաքած անձինք:

Հավելյալ տեղեկությունների համար կարող եք զանգահարել 077-013187, 033-013187
Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, քաղաք Մեղրի, Ադելյան 5
Վեբ կայք՝ meghri.am
Էլ. փոստ՝ megri.mankapartez100@gmail.com